ՀԲ. ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Մ աւրպ
2015
Ս. Էջմիածին

ՄԵԴԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԶԱՔԱՐԻԱ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

(Ճշգրտումներ, գրած եւ ծաղկած ձեռագրերի ամփոփ պատկեր)

Վասպուրականի մանրանկարչական դպրոցի նշանավոր գրիչ եւ ծաղկող Զաքարիա Աղթամարցու՝ կորած համարվող 1358 թ. ձեռագրի 2 թերթ (չափերը՝ 238x155, 237x158 մմ) հանգրվանել է Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբի Միմարա թանգարանում: Հայկական մանրանկարչության այդ «գտածոյի» մայր ձեռագիրը պարզել է Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, Մայր ցուցակի եւ ձեռագրագիտության բաժնի ղեկավար Գեւորգ Տեր-Վարդանյանը, նյութին առանձին հոդվածով անդրադարձել է նույն Միմարա թանգարանի աշխատակից Սլավեն Պերովիչը[1]:

Թերթերից մեկում պահպանվել է ձեռագրի մեջ առկա բոլորգիր մի հիշատարական, որ տեղեկացնում է, թե Ավետարանի հետագա ստացողը ուստա Շեխն է, ով պատվիրել է Ավետարանը նորոգել իր, ծնողների. հոր՝ Դավթի եւ մոր՝ Զավիրայի, կողակցի՝ Սոլթանի եւ որդու՝ Հովհաննեսի հոգիների հիշատակի համար[2]:

Նշվում է, որ ձեռագիրը նորոգվել է «ի դուռն» Ս. Սիոնի եւ Ս. Հակոբի, սուլթան Մուրադ խանի կառավարման, Էջմիածնի տեր Մելիքսեթ կաթողիկոսի հայրապետության, Ս. Թովմա առաքյալի առաջնորդ տեր Ավետիսի, Ս. Սիոնի եւ Ս. Հակոբի քահանա տեր Մեսրոպ Ըղոեցու ժամանակ, «մեղաւոր անարժան» Օհան կազմողի կողմից, ՌԽԲ.՝ 1593 թ.[3]:

Սլավեն Պերովիչը նշում է, որ մանրանկարները Զաքարիա Աղթամարցին արել է շուրջ 1357 թ.[4]: Պերովիչը 2008 թ., գալով Հայաստան եւ լինելով Մատենադարանում, ծանոթանում է Զաքարիա Աղթամարցու 1357 թ. Հ՝ 5332 ձեռագրին՝ եզրահանգելով, որ Միմարա թանգարանում պահվում են Աղթամարցու 1358 թ.՝ կորած համարվող ձեռագրի երկու թերթը:

---

1 Տե՛ս **Slaven Perovic'**, Zakarija Ahtamarci: Euzebijevo pismo I kanonske tablige I armenski molitveni svitak pahpanak ili hmail iz muzeja Mimara, Zagreb, 2008 (հոդվածում անդրադարձ կա նաեւ Միմարա թանգարանում պահվող հայկական հմայիլներին՝ «Աբրահամի զոհաբերության», Գաբրիել հրեշտակապետի, ս. Գեւորգի եւ ս. Սարգսի պատկերներով, որոնք հեղինակը թվագրում է ԺԷ.դ կամ ԺԸ. դարերով):

2 Տե՛ս անդ, էջ 6:

3 Տե՛ս անդ, էջ 6, նկ. 1:

4 Տե՛ս անդ, էջ 5:

Հայկական մանրանկարչության պատմության մեջ իր ուրույն հետքը թողած գրիչ եւ ծաղկող Զաքարիա Աղթամարցու՝ 1358 թ. ձեռագրի մասին տեղեկանում ենք Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանի միջոցով մեզ հասած հինգ հիշատակարաններից[5]. ձեռագրի գրչության 1358 թ. հիշատակարանի մի հատված Մաքսուդյանից առել է Լեւոն Խաչիկյանը[6], նույնը երկրորդել է նաեւ Սիրարփի Տեր-Ներսիսյանը, ում հաղորդած տվյալներին դեռ կանդրադառնանք:

Մենք չգիտենք, թե ինչպես է ձեռագրի երկու թերթը հայտնվել Խորվաթիայում[7], սակայն Մաքսուդյանի հաղորդած տվյալները թույլ են տալիս ասելու, որ 1358 թ. Ավետարանը Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի վանքում 18 համարի ներքո պահվել է ընդհուպ մինչեւ 1919 թ.[8], քանզի նույն տարվա դեկտեմբերի 24-25-ին Գողթն գավառի սիրտը համարվող Ագուլիս քաղաքի հայ բնակչությունը ենթարկվել է կոտորածի, իսկ Ս. Թովմա առաքյալի վանքի ձեռագրական հավաքածուն ցաք ու ցրիվ է արվել: Գուցե թե այս դեպքերից հետո մեր ձեռագիրը մաս-մաս հանգրվանել է աշխարհի տարբեր ծագերում:

Մեսրոպ վ. Մաքսուդյանն իր հոդվածում նշում է, որ 1906-1907 թթ. Ս. Թովմա առաքյալի վանքի վանահայր եղած ժամանակ հավաքել է վանքի, տեղական եկեղեցիների եւ մասնավոր անձանց մոտ պահվող հայերեն ձեռագրերի հիշատակարանները[9]: Նրա վկայությամբ՝ վանքի ձեռագրերը համարակալված են եղել, սակայն թվերը ձեռագրերի քանակին չեն համապատասխանել, քանզի իր տեսած ձեռագրերը 58-ն են եղել, մինչդեռ ձեռագրերի վրա եղել են 89 եւ 90 համարներ. նշված քանակից պակասել է 32 ձեռագիր:

Սուրբ Թովմա առաքյալի վանքի ձեռագրերը համարակալվել են Գրիգոր վարդապետ Տեր-Ստեփանյանի վանահայրության շրջանում, նրա եղբորորդի Գեւորգ Կոստանյան Տեր-Ստեփանոսյանցի ձեռքով: Հ^մր 74 ձեռագրի մեջ նույն Գեւորգ Կոստանյան Տեր-Ստեփանոսյանցի գրած մի հիշատակարան

---

5 **Մ. վ. Մաքսուտեան,** Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց. Եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնավորաց.- «Արարատ», 1911, էջ 562-3 (այսուհետ՝ Մ. վ. Մաքսուտեան, Նկարագրութիւն):

6 «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 440:

7 Այդ մասին որեւէ տեղեկություն չի հաղորդում նաեւ Սլավեն Պերովիչը:

8 Տե՛ս **Ա. Այվազյան,** Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը, Երեւան, 2013: Հատորում ներառված են 1919 թ. դեկտեմբերի 24-25-ին Ագուլիս քաղաքի հայ բնակչությանը կոտորածի ենթարկելու վերաբերյալ 7 ականատեսների (Ի. Տեր-Անտոնյան, Ն. Ավշարյան, Կ. Սիմոնյան, Շ. Հախնազարյան, անհայտ հեղինակ, Թ. Հայրապետյան, Հ. Հախնազարյան) եւ 8 ժամանակակիցների (Գ. Սարգսյան, Պ. Պետրոսյան, Հ. Անագչյան, Գ. Փանյան, Վ. Միքայելյան, Վ. Կզարթմյան, Ե. Մելիք-Մուսյան, Ավո) վկայություն-հուշագրությունները: Վերջիններս, չորսից բացի (Ի. Տեր-Անտոնյան, Հ. Հախնազարյան, Ն. Ավշարյան, Ավո), հրատարակվել են առաջին անգամ եւ կարեւոր փաստաթղթեր են՝ Ագուլիսի ողբերգությունը, ինչպես եւ Նախիջեւանի գավառների 1918-21 թթ. իրադարձությունները հանգամանալից ուսումնասիրելու համար:

9 Տե՛ս **Մ. վ. Մաքսուտեան,** նշվ. աշխ., 1911, էջ 117:

տեղեկացնում է, որ ձեռագրերի համարակալումն ինքն արել է 1898 թ. ամռանը, այսինքն՝ 1906 թ.՝ մինչեւ Մաքսուդյանի՝ այնտեղ վանահայր նշանակվելը, ութ տարվա ընթացքում անհետացել է 32 ձեռագիր[10]:

Բացի այդ՝ այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ արդեն 1898 թ. Զաքարիա Աղթամարցու 1358 թ. ձեռագիրը գտնվել է Ս. Թովմա առաքյալի վանքում եւ կրել է 18 համարը[11]:

Մաքսուդյանի նկարագրության մեջ կա նաեւ Զագրեբի Միմարա թանգարանում պահվող հիշատակարանը:

1358 թ. ձեռագրի ծաղկողի մասին տեղեկանում ենք 270բ էջի հիշատակարանից, որտեղ Ավետարանի գրիչ Կարապետ կրոնավորը նշում է, որ ձեռագիրը գրել է «յութհարիւրերորդի եւթներորդի»՝ 1358 թ., Թանկխաթունի համար, խնդրում է հիշել նաեւ իր ծնողներին, եղբայրներին եւ Զաքարիա ծաղկողին[12]:

Ինչպես արդեն գիտենք, Զաքարիա Աղթամարցին աշակերտել է իր հորեղբայր Կարապետ գրչին, ով հիշատակարաններում հաճախ հիշատակվում է որպես Կարապետ կրոնավոր, եւ ծաղկել է նրա գրչագրած մի քանի ձեռագրեր, այդ թվում՝ 1358 թ. Ավետարանը:

Հիշատակարաններից պարզ է դառնում, որ ձեռագիրը 1593 թ. հետո վերանորոգվել է նաեւ 1653 թ., Սիմոն երեցի կողմից, «բարեմիտ ու աստվածասեր» Հերիքնազի համար[13], իսկ 1789 թ. «ուստա Ավագը» այս Ավետարանը գնել է անհավատների ձեռքից[14]:

1358 թ. ձեռագրի երկու թերթը պատկերագրական եւ ոճային սերտ աղերսներ ունի Զաքարիա Աղթամարցու 1357 թ. (Հմր 5332) ձեռագրի հետ, որը նրա ձեռագրացանկում առավել հաջողվածներից է: Միմարայում հանգրվանած հիշատակարանի դարձերեսին ներկայացված է Եվսեբիոս Կեսարացու նամակը Կարպիանոսին: Ճակատազարդում կամարաձեւ զարդանախշի տակ Եւսեբիոսն է՝ աջ ձեռքը օրհնող դիրքով, իսկ ձախին՝ բացված գալարակ: Այստեղ Կեսարացին բավականին երիտասարդ է պատկերված՝ սեւ մազերով, հոնքերով եւ մորուքով, ի տարբերություն 1357 թ. ձեռագրի, որտեղ Եւսեբիոսն ալեհեր է, սակայն երկուսն էլ նույնանում են ֆիգուրների դիրքով, շարժուձեւով եւ լուսապսակներով:

Ճակատազարդի, եզերագոտու, քիվի, սյուների զարդանախշային մշակումը եւս սերտորեն աղերսվում է 1357 թ. ձեռագրին, նույնը վերաբերում է նաեւ գունային մշակմանը, սակայն, ի տարբերություն 1358 թ. ձեռագրի, 1357 թ. Ավետարանը Զաքարիա Աղթամարցու մյուս ձեռագրերի շարքում աչքի է

10 Տե՛ս անդ:

11 Տե՛ս անդ, էջ 118 (ի դեպ, պահպանված ձեռագրերից երկուսը կրել են 60 համարը, հակառակ դեպքում կորած ձեռագրերի թիվը կլիներ 33):

12 Տե՛ս անդ, էջ 563:

13 Տե՛ս անդ, էջ 563:

14 Տե՛ս անդ, էջ 562:

ընկնում կատարման բարձր վարպետությամբ, այստեղ ծաղկողի ձեռքը շատ ավելի վստահ է, պատկերագրական, ոճային եւ թեմատիկ լուծումները՝ համարձակ: Ճակատազարդերը լեցուն են արմավենու ոճավորված տերեւներ հիշեցնող բուսական զարդանաշխով: Խոյակները եւ այունը խոյակին միացնող հատվածները պատկերագրական առանձնահատկություններով աչքի չեն ընկնում:

1358 թ. ձեռագրի մեզ հասած 3ա էջի ճակատազարդի կամարներից 2-ը նույն չափի են, մեկն՝ ավելի փոքր: Կամարներն աչքի են ընկնում առատ կանաչ գունավորմամբ, ինչը բնորոշ է Աղթամարցուն, քանզի նրա գունապնակում գույներից մեկը հաճախ դառնում է տիրապետող:

Ձեռագրի 3բ էջը գրեթե նույնությամբ կրկնում է 1357 թ. ձեռագրի պատկերաոճը: Ուղղանկյուն ճակատազարդի ներսում առանձնանում է եռանկյունը, որտեղ պատկերված է հովազի հետ մենամարտող բազեն, հովազը շատ ոճավորված է, եւ հստակ չի ուրվագծվում բնորոշ պատկերատիպը: Արծիվը պատկերված է թեւաբաց, կարծես պատրաստվում է թռիչքի:

Մեր աշխատանքն արդեն սկսել էինք, երբ տեղեկացանք, որ Մոն-Սեն Միշելի ձեռագրերի թանգարանում պահվում է 1358 թ. Ավետարանի եւս մեկ թերթ, որի մասին ընդարձակ հոդված ունի Աննա Լեյլոյան-Եկմալյանը[15]: Ավրանշի հայկական ցուցադրությանը նվիրված պատկերագրքում այդ թերթը ներկայանում է Հմր 7-ի ներքո, նկարագրության մեջ նշվում է, որ պատառիկի վրա կա կանոնների աղյուսակը, իսկ դարձերեսին՝ «Ծնունդ» եւ «Ավետում» տերունական տեսարաններն են, այն թվագրվում է ԺԳ. դարի վերջով կամ ԺԴ. դարի սկիզբով՝ համարվելով Արծկեի, Արճեշի կամ Բերկրիի գրչատներից մեկի աշխատանք[16]: Համեմատական վերլուծության շնորհիվ, առանձնացնելով պատկերների դետալները, մասնավորապես աչքերը, ձեռքերը, մատները, հագուստը, զարդատարրերը, Աննա Լեյլոյանը փաստում է, որ պատառիկը վստահաբար Զաքարիա Աղթամարցու ձեռքի աշխատանքն է. դրա օգտին են վկայում նաեւ Զաքարիա Աղթամարցու 1357 թ. եւ 1368 թ. ձեռագրերի հետ անցկացված զուգահեռները:

Մինչ այս թերթի՝ 1358թ-ի ձեռագրին պատկանելու հարցին անդրադառնալը, խոսենք Զաքարիա Աղթամարցուն վերագրվող՝ Ձեստեր Բիթիի հավաքածուի Հմր 555 ձեռագրի[17] մասին[18]: Այս ձեռագիրը բաղկացած է եր-

15 Տե՛ս **A. Leyloyan-Yekmalyan,** Fragment d'un E'vangile du Vaspurakan: E'tude stylistique et icono-graphique des miniatures et identification de L'artiste, REArm 35, 2013, էջ 241-264 (այսուհետեւ՝ A. Leyloyan-Yekmalyan, Fragment):

16 Տե՛ս անդ, էջ 241:

17 Հ. Հակոբյանն իր «Վասպուրականի մանրանկարչությունը» (Երեւան, 1976, էջ 74) գրքի Զաքարիա Աղթամարցուն նվիրված գլխում Ձեսթեր Բիթիի Հմր 555 ձեռագրի երեք թերթ, որոնք պարունակում են տերունական նկարներ, վերագրում է Աղթամարցուն:

18 Տե՛ս **S. Der-Nersessian,** The Chester Beatty library, Dublin, 1958, p. 15 (Ս. Տեր-Ներսիսյանը նշում է, որ ձեռագիրը, հավանաբար, ստեղծվել է Վանա լճի շրջակայքում, ոճական նմանու-

կու մասից. մեկ թերթը, որ ունի կանոնների աղյուսակը եւ Մատթեոսի անվանաթերթը, թվագրվում է ԺԲ. դարով, եւ ըստ հիշատակարանի՝ գրիչը Հակոբն է, իսկ ԺԴ. դարի՝ Զաքարիա Աղթամարցուն վերագրվող թերթերում «Մկրտություն/Ղազարոսի հարություն», «Մուտք Երուսաղեմ/Ոտնլվա», «Պայծառակերպություն/Մատնություն», «Խաչելություն/Թաղում» տեսարաններն են, ինչպես նաեւ Մարկոսի պատկերը եւ անվանաթերթը, իսկ նոր մասի հիշատակարանում Սիրարփի Տեր-Ներսիսյանը տալիս է հիշատակարանի շատ կարեւոր մի մանրամասն. ձեռագիրը գրվել է Թանկխաթունի եւ նրա ամուսին Հովհաննեսի համար[19]: Հմր 555-ում պակասում են Եւսեբիոսի նամակը, կանոնների աղյուսակները՝ բացառությամբ ԺԲ. դարից պահպանված մի թերթի եւ «Ավետում/Ծնունդ» տեսարանների:

Ավելին, Ս. Տեր-Նեսիսյանը ներկայացնում է նաեւ Հմր 555-ի 1653 թ. հիշատակարանը, որտեղ նշվում է, որ Սիմոն երեցը ձեռագիրը նորոգել է «բարեմիտ ու աստվածասեր» Հերիքնազի համար, այս նույն հիշատակարանը, ինչպես նաեւ վերոնշյալ հիշատակարանը Մաքսուդյանը ժամանակին օրինակել է 1358 թ. ձեռագրից:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալը եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հմր 555-ում տերունական շարքը ներկայացված չէ սկզբի թերթերի վրա, ինչպես ընդունված էր Վասպուրականում, այլ ցրված է ձեռագրով մեկ, մեջբերենք Լեյլոյանի կարեւոր եզրահանգումը, այն է՝ Դուբլինի Չեսթեր Բիթի հավաքածուի Հմր 555 ձեռագիրը Զաքարիա Աղթամարցու կորած համարվող 1358 թ. ծաղկած Ավետարանն է[20]: Պատկերն ավելի ամբողջական է դառնում, երբ Մոն-Սեն Միշելի ձեռագրերի թանգարանի «Ավետում/Ծնունդ» տեսարանները պատկերող պատառիկին հավելում ենք նաեւ Զագրեբի Միմարա թանգարանում պահվող երկու թերթը՝ Օհան կազմողի կողմից գրված 1593 թ. հիշատակարանը, Եւսեբիոսի նամակը եւ կանոնների երկու աղյուսակը:

Պարզվում է, որ գործ ունենք գրեթե ամբողջական մի ձեռագրի հետ, որը երկար ժամանակ դասվում էր Աղթամարցու՝ կորած համարվող ձեռագրերի շարքին: Ձեռագրից դեռեւս պակասում է մի քանի թերթ, այդ թվում նաեւ 1789 թ. հիշատակարանը, որտեղ նշվում է, որ ուստա Ավագը այս Ավետարանը գնել է անհավատների ձեռքից:

Լիահույս ենք, սակայն, որ գուցե մի օր ի հայտ գան ոչ միայն այդ, այլեւ Զաքարիա Աղթամարցու՝ կորած համարվող եւ գուցե մեզ դեռեւս անհայտ ձեռագրեր:

Մաքսուդյանի գրի առած հիշատակարանների ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ Զաքարիա Աղթամարցու կորած համարվող 1389

թյուններ է տեսում Խիզանի 1335 թ., Արծկեի 1338 թ., ինչպես նաեւ Չեստեր Բիթիի Հմր 565 ձեռագրերի հետ):

19 Տե՛ս անդ, էջ 15:

20 Տե՛ս **A. Leyloyan-Yekmalyan,** Fragment, էջ 259:

թ. Ճառընտիրը եւս պահվել է Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի վանքում 24 համարի տակ[21]: Ձեռագրի՝ մեզ հասած հիշատակարանում Կարապետ գրիչը գրում է, որ Ավետարանի վրա աշխատել է «ի յայսպիսի դառն եւ աղէտակոծ ժամանակիս, ես՝ նուաստս ի գրչաւորաց Կարապետ քահանայ, սկսայ զգիրքս այս...», ինչպես նաեւ խնդրում է հիշել «զԶաքարիայ, որ գրելոյն աւգնեաց եւ ծաղկեաց»[22]: Ձեռագրի ստացողը Ստեփանոսն է, ով այն որպես ընծա հանձնել է Գավաշ գյուղի Ս. Ամենափրկիչ եւ Ս. Տիրամայր եկեղեցիներին: Այս ձեռագրի մասին մեր տեղեկությունները եւս հասնում են ընդհուպ 1919 թ.-ը, սակայն հույս ունենք, որ 1358 թ. ձեռագրի օրինակով այն եւս մի օր կհայտնաբերվի աշխարհի որեւէ թանգարանում կամ մասնավոր հավաքածուներից մեկում:

* * *

Ագուլիսն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ մշտապես գտնվել է քաղաքական եւ մշակութային իրադարձությունների կենտրոնում: Հայտնի Գողթն գավառի այս քաղաքը տարածված է եղել այժմյան Վերին եւ Ներքին Ագուլիսներ գյուղերի տարածքում, իսկ պատմական տարածքը գտնվում է Օրդուբադ շրջկենտրոնից 2-2,5 կմ հեռավորության վրա[23]:

Սուրբ Թովմայի վանքը, որն իր պատմական անցյալով կենտրոնական տեղ է զբաղեցրել Ագուլիսի մշակութային կյանքում, կառուցվել է 325 թ., Բարդուղիմեոս առաքյալի կողմից, հետագայում մի քանի անգամ վերանորոգվել է[24]:

Զաքարիա Աղթամարցու՝ Վասպուրականում ծավալած գործունեության արդյունքում այսօր մեզ են հասել մի շարք ձեռագրեր, որոնցից յուրաքանչյուրը ինքնատիպ է: Ձեռագրերի ոճական եւ պատկերագրական ընդհանրությունները, երբեմն նաեւ կրկնությունները, ավելի են ընդգծում Աղթամարցու ինքնատիպությունը, նրա սեփական ձեռագիրը, որով առանձնանում էր իր ժամանակակիցների շրջանում:

Նրա ֆիգուրները կենդանի են, վառ, գույները՝ պարզ, բայց միեւնույն ժամանակ արտահայտիչ: Աղթամարցու գրչի տակ գիծը կարծես շունչ է առնում եւ ներդաշնակ գույների մաքուր գործածությամբ ոճավորվում՝ կենդանություն հաղորդելով կերպարներին: Չնայած պատկերների հարթությանը՝ դրանք օժտված են ճկուն խաղով, տարածության մեջ ազատ են, զգայուն եւ

21 Տե՛ս Մ. վ. Մաքսուտեան, նշվ. աշխ., էջ 759-766:

22 «ԺԴ. դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ». կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 579:

23 **Ա. Այվազյան,** Նախիջեւանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1978, էջ 8:

24 Տե՛ս անդ., էջ 11:

արտահայտիչ՝ շնորհիվ գունավոր գծային, հաճախ շագանակագույն, իսկ աչքերի դեպքում՝ կապտականաչավուն ուրվագծի կիրառման:

Կարող ենք ասել, որ Վասպուրականի մանրանկարչական դպրոցի ինքնատիպ ոճը պայմանավորված է նաեւ Աղթամարցու նախասիրություններով. նրա լակոնական, անխառն, բայց վառ եւ ինչ-որ չափով կոնտրաստային գունաշարը, հարթային եւ կյանքով լեցուն պատկերները, ավետարանական թեմաները աշխարհիկ շնչով մատուցելը, դրանց բնորոշ արտահայտչականությունը մի տեսակ ավանդույթի են վերածվում ոչ միայն վասպուրականյան, այլեւ ամբողջ հայկական մանրանկարչական արվեստում:

Մկրտիչ քահանայի եւ Թանկխաթունի որդի Զաքարիա Աղթամարցին սերում էր նկարչական եւ գրչական ձիրքով օժտված ընտանիքից: Նրա եղբայր Կարապետը եւս զբաղվում էր գրչությամբ: Բացի այդ՝ նա Դանիել եւ Թումա գրիչների հորեղբայրն էր եւ նրանց ուսուցիչը, ինչի մասին վկայում են վերջիններիս թողած հիշատակարանները՝ 1404, 1409, 1412, 1421, 1433 եւ 1441 թվականների ձեռագրերում, ինչպես նաեւ 1403 թ. (Հմր 4923) ձեռագրում, որի ծաղկողը Զաքարիա Աղթամարցին է. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս յաստուածաբնակ կղզիս Աղթամարի... ի հայրապետութեան տէր Դաւթի, ի թուականիս հայոց ՊԾԲ. ... Յիշեցէք... դարձեալ զվարդապետն իմ եւ զհոգեւոր հայրն եւ ըստ մարմնոյ հաւրեղբայրն զԶաքարայ փիլիսոփայն, որ բազում աշխատեցաւ ի ծաղկել զսուրբ Աւետարան»[25]:

Ուշագրավ է, սակայն, Թումայի գրչագրած 1426 թ. (Վրացական թանգարանի Հմր 23) Ավետարանի հիշատակարանը, որտեղ Զաքարիան հիշատակվում է որպես «զհանգուցեալն ի Քրիստոս»[26]:

Այս ուսումնասիրության մեջ ընդգրկել ենք Զաքարիա Աղթամարցու անունով հայտնի ձեռագրերի 18 միավոր[27], քանակին ավելացնում ենք եւս երեք ձեռագիր, որոնք, ցավոք, մեզ հայտնի են միայն հիշատակարաններով:

---

25 **Ա. Երեմյան,** Գրիչ Դանիել քահանա, Մանրանկարիչ եւ գրիչ Զաքարիա Աղթամարցի.- Հայաստանյաց եկեղեցի, Նիւ Եորք, 1965, թ. 2, էջ 47:

26 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ 357:

27 Հ. Հակոբյանը «Վասպուրականի մանրանկարչությունը» (Երեւան, 1976, էջ 199) եւ «Մանրանկարիչ Զաքարիա Աղթամարցի».- («Պատմաբանասիրական հանդես», 1966, թ. 2) հոդվածում խոսում է Զաքարիա Աղթամարցուն պատկանող 18 ձեռագրերի մասին, սակայն ձեռագրերի ցանկ չի տալիս, իսկ Աստղիկ Գեւորգյանն իր «Հայ մանրանկարիչներ» (Մատենագիտութիւն, 9-19-րդ դդ., Գահիրէ, 1998) գրքում Զաքարիա Աղթամարցու անվան հետ է կապում 16 ձեռագիր, որոնցից երկուսը Հմր 10829 եւ Հմր 5510-ը Հակոբյանի ներկայացրած ձեռագրերի շարքում չկան: Աննա Լեյլոյան-Եկմալյանը եւս ներկայացրել է Զաքարիա Աղթամարցու գրչին պատկանող 18 ձեռագիր, որոնց շարքում խոսում է նաեւ 1304 թ. գրված եւ 1374 թ. Զաքարիայի կողմից ծաղկված Ավետարանի մասին, որից, ցավոք, մեզ միայն հասել է հիշատարակը (**Ե. Լալայեան,** Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, 1915, Պրակ Ա., Թիֆլիս, էջ 142-143): Իսկ Հմր 555-ը (Չեստեր Բիթի հավաքածու, Դուբլին), ինչպես պարզվեց, հենց 1358 թ. Ավետարանն է:

1358թ. ձեռագիր

1357թ. ձեռագիր



Զաքարիա Աղթամարցու 1357 թ. և 1358 թ.
ձեռագրերի մանրանկարների
զարդատարրերի համեմատական աղյուսակ

Զաքարիա Աղթամարցու Զագրերի Միմարա թանգարանում պահվող 1358 թ. ձեռագրի երկու թերթ

Միայն հիշատակարանի տեսքով հայտնի ձեռագրերից մեկը ԺԴ.-ԺԵ. դարերով թվագրվող մի Ավետարան է, որը պահվել է Կարինի Արծնյան վարժարանի թանգարանում[28]: Ձեռագրի երեք հիշատակարանից մեկում նշվում է գրչի՝ Զաքարիա Աղթամարցու անունը. «Զմեղուցեալ գրողս զսուտանուն կրօնաւոր Զաքարայ եւ ստացողն յիշեցէ՛ք ի Քրիստոս, աղաչեմ», ինչպես նաեւ տեղեկանում ենք, որ ձեռագիրն ստեղծվել է Աղթամարում, Յակովբ եպիսկոպոսի համար: Նոտրգիր մի այլ հիշատակարան արդեն վերաբերում է ձեռագրի՝ ՌԼԹ. (1585) թ. նորոգմանը:

Երվանդ Լալայանի շնորհիվ մեզ է հասել Զաքարիայի մասնակցությամբ ստեղծված եւս երկու ձեռագրի հիշատակարան, որոնցից մեկը Լալայանի ցուցակում զբաղեցնում է 107 համարը[29]: 1392 թ. Աղթամարում ստեղծված ձեռագրի գրիչը Կարապետ քահանան է: Ձեռագրի նկարագրության մեջ նշվում է, որ ծաղկողը եւ կազմողն անհայտ են, սակայն, կարդալով գրիչի հիշատակարանը, պարզ է դառնում, որ ձեռագրի ծաղկողը Զաքարիան է. «զԶաքարիայ կրաւնաւորն, որ աշխատեցաւ եւ ծաղկեաց»[30]:

Լալայանի ցուցակի Հմր 77 ձեռագրի գրիչը եւս Զաքարիան է[31]: Ձեռագիրը գրվել է 1304 թ., իսկ 1374 թ. նորոգվել է: Հիշատակարաններում նշվում են նաեւ 1304 թ. (Թումա եւ Հայրապետ) եւ 1374 թ. (Վարդան եւ Ոսկի) ստացողների անունները, ինչպես նաեւ Սարգիս կազմողի անունը: Հիշատակարանում կարդում ենք նաեւ Կարապետ ստացողի անունը, ով ձեռագիրը հանձնել է Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին:

---

28 **Յ. Ծ. վ. Քոսեան,** Յուցակ հայերէն ձեռագրաց Արծնեան վարժարանի ի Կարին, «Հանդէս ամսօրեայ», 1961-1962, էջ 102: Որպես Զաքարիա Աղթամարցու աշխատանք՝ այս ձեռագիրը նշում է նաեւ Լ. Թումանյանը «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը» գրքում (Հեղինակ-կազմող՝ Կ. Մաթեւոսյան, մասնակից հեղինակներ՝ Լ. Թումանյան, Ա. Ասրյան, Սբ. Էջմիածին, 2013, էջ 164):

29 **Երուանդ Լալայեան,** նշվ. աշխ., էջ 225-226: Այս ձեռագիրը նշում է նաեւ Լ. Թումանյանը «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը» գրքում (էջ 165):

30 Տե՛ս անդ,, էջ 227-228, Այս ձեռագրի մասին հիշատակում է նաեւ Հրաչյա Աճառյանը՝ «Հայոց անձնանունների բառարան», հ. Բ., Երեւան, 1994, էջ 189: Այս նույն էջում Զաքարիա Աղթամարցու Խաչիկ անունով եղբոր կապակցությամբ Աճառյանը նշում է. «Կարծեմ թե նույն Խաչիկն է, որ 1402թ. սարկավագ է ձեռնադրվել եւ կոչվել Ներսես», սրանից պարզ է դառնում, որ Աճառյանը Զաքարիա Աղթամարցուն շփոթել է Հովհաննես Խիզանցու եղբայր գրիչ Զաքարիայի հետ, որի մյուս եղբոր անունը Ներսես էր, իսկ հոր անունը՝ Մկրտիչ քահանա: Հովհաննես Խիզանցու եղբայր Զաքարիա գրիչը Աղթամարցու ժամանակակիցն էր, նրանից մեզ հայտնի է երեք ձեռագիր, որոնցից երկուսը՝ Հմր 4223-ը(1401 թ., Խիզան, ստացող՝ Աստվածատուր քահանա, 14 տերունական պատկեր, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Բ., կազմեցին Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1970, էջ 1174) եւ Հմր 3202-ը(1417 թ. Բառգիրք, ստացող՝ Ավետիս վարդապետ, ԺԵ. դ-ի հիշ-ք, Ա., էջ 197-198) պահվում են Մատենադարանում, իսկ 1413թ. Ավետարանը հայտնի է միայն հիշատակարանի տեսքով(Կյումուշխանայի Ս. Փրկչի վանքի Հմր 2 ձեռագիր, Վան, ստացող՝ Ղուկաս քահանա, Տէր Հովհաննես ա. քահանա Մկրյան, Կիւմիշհանէի Ս. Փրկչի վանուց ձեռագիր մատեանք եւ յիշատակարանք, Արարատ, 1905, էջ 728-730):

31 Տե՛ս անդ, էջ 143-144. այս ձեռագիրն իր կազմած ցանկում նշում է նաեւ Աննա Լեյլոյան-Եկմալյանը՝ A. Leyloyan-Yekmalyan, Fragment , էջ 241-264:

Ամփոփելով, ներկայացնենք Զաքարիա Աղթամարցու՝ այս պահին մեզ հայտնի 21 ձեռագիր մատյանների ամփոփ ցանկը, որը գուցե հիմք դառնա այս տաղանդավոր վասպուրականցու վաստակը հետագայում ավելի ամբողջական ներկայացնելու համար, հատկապես եթե հաշվի առնենք, որ բացառված չէ, որ աշխարհի ցանկացած անկյունում կարող է հանգրվանած լինել Զաքարիա Աղթամարցու գրչագրած կամ ծաղկած ձեռագրի թեկուզ մեկ թերթ:

* * *

Ցանկ Զաքարիա Աղթամարցու ծաղկած եւ գրչագրած ձեռագրերի

	Հավաքածու	Բվնդկ.	Ժամանակ	Ստեղծման վայր	Գրիչ	Ծաղկող
1	Մատ. Հմր 2843	Ավետարան	1354	Աղթամար	Կարապետ կր.	Զաքարիա Աղթամարցի
2	Մատ. Հմր 4915	Ավետարան	1355	Աղթամար	Գրիգոր	Զաքարիա Աղթամարցի եւ Թումա քահանա
3	Մատ. Հմր 5332	Ավետարան	1357	Ս. Գեւորգ վանք	Կարապետ կրոնավոր	Զաքարիա Աղթամարցի
4	Մաքսուդյան, էջ 562-563	Ավետարան	1358	Աղթամար	Կարապետ կրոնավոր	Զաքարիա Աղթամարցի
	Ջեսթեր Բիթիի Հմր 555		ԺԲ. դ. 1358	Աղթամար	Հակոբ Կարապետ կրոնավոր	Զաքարիա Աղթամարցի
	Ավրանշի Հմր 7		1358	Աղթամար		
5	Մատ. Հմր 10829	Ավետարան	1365-1366	Խիզան	Ստեփանոս	Զաքարիա Աղթամարցի
6	Մատ. Հմր 5347	Ավետարան	1368	Խիզան	Ստեփանոս	Զաքարիա Աղթամարցի
7	Մատ. Հմր 4687	Ճաշոց	1312 1371	Աղթամար	Դանիել	Դանիել (?) Զաքարիա Աղթամարցի
8	Մատ.Հմր 6422	Ավետարան	ԺԴ. դ. 1371	Աղթամար	Թումա քահանա	Զաքարիա Աղթամարցի
9	Լալայան, 1915, էջ 143-144	Ավետարան	1304 1374	(?)	(?)	Զաքարիա Աղթամարցի
10	Մատ. Հմր 6402	Ավետարան	1377	Աղթամար	Ավագ դպիր	Զաքարիա Աղթամարցի
11	Մատ. Հմր 4870	Ճաշոց	1385	Աղթամար	Զաքարիա Աղթամարցի	Զաքարիա Աղթամարցի
12	Մատ. Հմր 5480	Ավետարան	1387-1388	Մանուկ Ս. Նշան, Աղթամար	Պետրոս, Ատոմ(ցանկերի գրիչը)	Զաքարիա Աղթամարցի (?)

13	Խաչիկյան, 1950, էջ 577-578	Ճառընտիր	1389	Աղթամար	Զաքարիա Աղթամարցի եւ Կարապետ քահանա	Զաքարիա Աղթամարցի
14	Մատ. Հմր 4941	Ավետարան	1390	Աղթամար	Զաքարիա Աղթամարցի	Զաքարիա Աղթամարցի
15	Մատ. Հմր 4908	Ավետարան	1393	Աղթամար	Զաքարիա Աղթամարցի	Զաքարիա Աղթամարցի
16	Մատ. Հմր 5510	Ավետարան	1399	Աղթամար	Զաքարիա Աղթամարցի եւ Դանիել սարկավագ (ցանկերի գրիչը)	Զաքարիա Աղթամարցի եւ Թումա քահանա
17	Մատ. Հմր 4923	Ավետարան	1403	Աղթամար	Կարապետ քահանա եւ Դանիել	Զաքարիա Աղթամարցի
18	Մատ. Հմր 10522	Ավետարան	ԺԴ. դ.	Աղթամար(?)	Զաքարիա Աղթամարցի (?)	Զաքարիա Աղթամարցի
19	Քոսյան, էջ 102	Ավետարան	ԺԴ.-ԺԵ. դդ.(?)	Աղթամար	Զաքարիա Աղթամարցի	(?)
20	Լալայան, էջ 225-226	Ավետարան	1392	Աղթամար	Կարապետ քահանա	Զաքարիա Աղթամարցի
21	Մատ. Հմր 4740	Ավետարան	ԺԴ. դ դար	(?)	(?)	Զաքարիա Աղթամարցի

РЕЗЮМЕ

В результате деятельности Закария Ахтамарского в Васпуракане до нас дошли ряд рукописей, стилистические и иконографические сходства которых еще больше подчеркивают оригинальность автора, как и его почерк, который выделялся среди своих современников.

В статье мы представляем 2 листа (Музей Мимара, Загреб) рукописи 1358 года Ахтамарского, которые считались утерянными. В одном листе сохранилась памятная запись (болоргир), на обратной стороне которой представлено письмо Евсевия Кесария Карпиану.

Листы 3а и 3б рукописи 1358 года являются хоранами, которые почти с точностью повторяют стилистику рукописи 1357 года. Картина этой рукописи становится более полной, когда к ней добавляем еще один лист , отображающий «Благовещение / Рождество» из музея Мон-Сен-Мишель . Исходя из этого можно сделать вывод, что рукопись номер 555 из собрания Честер Битти является рукописью 1358 года Закария Ахтамарского. В результате у нас полноценная рукопись, которая долгое время считалась утерянным.

В этой статье к 18 рукописям, автором которых считается Закария Ахтамарский прибавляем еще три, которые, к сожалению, до нас дошли только в виде памятных записей.

SUMMARY

A number of manuscips by Zakaria Aghtamartsi painted during his activities in Vaspurakan, peculiar with their stylistic and iconographic features highlight the originality of the scribe thus making him stand out among his contemporaries.

In this article we represent two sheets of manuscripts dating back 1358 which were considered lost eventually kept in Zagrebi Mimara Museum. A kolophon of the manuscript has been preserved in one of the newspapers the reverse page depicting the letter written by Eusebios of Cesarene to Carpianos . The 3a and 3b pages of the manuscript painted in 1358 represnt alters which are almost copies of the one dating a year back. We witness a more complete form of the manuscript by adding one more sheet, depicting "Annunciation / Christmas" scenes, kept in Mount Saint Michel manuscript museum.

All these make us to conclude Number 555 manuscript of Dublin Chester Beattie collection is but Gospel of Zakaria Aghtamartsi painted in 1358. As a result, we are dealing with a nearly complete manuscript, which has been long considered to the series of painter's lost manuscripts.

This article deals with another three manuscripts in addition to well known 18 ones. Unfortunately we are familiar with the three manuscripts only through the kolophons.